

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեդրանի

Պոչկարիոյ համար տարեկան 10 ժր

" " 1/2 " 5 "

Արտասահմանի համար " 12 "

" " 1/2 " 6 "

Կալանիկ վճարելի

Համակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատ. ուսման միայն կը հրատարակուին ամբողջովին կամ մասամբ:

Շրանցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 գեղը կը լինի:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Հայերը ընթերցողն ունին վառնաի մէջ. նոյն բանն է ըսել հայերը ընթերցարան չունին վառնաի մէջ: Թերեւս անոնք որ օրը մէկ քանի անգամ կը յաճախեն Սասունի սրճարանին վրայի կուր ու պզտիկ սենեակը, հերքեն զիս ու վստահօրէն ըսեն թէ «մենք ընթերցարան ունինք վառնաի մէջ»:

Մի կարծէք սակայն որ ընթերցարան ըսուած բանը այնպէս կըլլայ որպիսին մենք ունինք. կը սխալիք ու չարաչար կը խաբէք ինքզինքնիդ. երկու լայն սեղաններ՝ դէմ դիմաց խուցի մը մէջ, մատենադարան մը ուր արձակ մուտ կը գտնէ օգը՝ առանց արգելքի հանդիպելու, վառն զի պարպ է, պատերուն վրայ մէկ քանի նկարներ, ու այն երկու նստիկան տեղով սեղաններուն վրայ մէկ քանի լրագրի ստուերներ, որոնք մասնաւոր ախրու թիւն ու արգաստանք կը ձգեն:

Սրճարաններ կան ուր մարդ աւելի կը ներշնչուի և աւելի առատ նիւթ կը գտնայ իր ընթերցարանի թուական քան մեր վառնաիկան ընթերցարանին մէջ: Այս բառը կերեւայ թէ փոխաբերաբար գործածուած է. լատգոյն է ըսել հանգստարան կամ քնարան, վառն զի այդ տրամակուռ խցիկը քնաբեր յատկութիւն ունի:

Վերջապէս հայերը հիմակ ընթերցարան չունին վառնաի մէջ. ունեցածին և ոչ իսկ հեռուէն կուտայ այդ բանին գաղափարը:

Բայց ձգենք ընթերցարանին օձիքը, որ բնաւ յանցանք չունի, և զայն վարդներուն ընթացքը քննենք:

Ասկից իբր չորս տարի առաջ կազմուած է Սիսակեան անուն ընկերութիւն մը որուն նպատակն է ընթերցարան մը բանալ յարմար տարրերով և դնել հասարակութեան արտադրութեան տակ: Բաժանորդագրութեամբ պիտի հայթայթուէր ծախքը: Եւ արդարեւ երկու տարի ետք, 80 ոս.

կիի գումար մը գոյացած ըլլալով ընթերցարանը կը բացուի: Ընկերութիւնը կը գտնուէր հոգաբարձութեան հսկողութեան ներքեւ, և իր հասոյթին 100 ին 20ը վարժարանին պիտի յատկացուէր:

Սակայն, ընկերութեան պատանդաւորները, հաւաքելէ յետոյ սոյն գումարը և բանալէ յետոյ ընթերցարանը, ենթադրելով որ իրենց պարտքը լիովին կատարած լինցուցած են, դադարեցան այլ եւս գոյութեան նշան ցուցնել: Ոչ բաժնեգին հաւաքեցին, ոչ շանք ըրին ընթերցարանը զարգացնելու և ոչ ալ փոյթ՝ հաշիւ տալու հոգաբարձութեան և ընդհ. ժողովին, թողուցին որ իրենք ինքնին յառաջանան: 80 ոսկիի կլորիկ գումարը խարճեցին բլիկ քշիկ, մինչեւ որ հասաւ. փոխանակ ուշաբերելու եւ գործին նոր զարկ մը տալու, ընկերութեան անդամները տեղերնուն անգամ չերեքացին, և մինչև հիմակ այնպէս կը շարունակեն, գտնէ հրաժարելու ալ ձանձրոյթը յանձն չառնելով. վառն զի արդէն տարիէ մը ի վեր իրենց պաշտօնավարութեան շըրջանն աւարտած է:

Իրենց այս անպատեհ ընթացքին համար մերթ եղած դիտողութիւններ, իոյն իսկ թերթիս խմբագրութեան կողմէ անձնապէս, բնաւ արդիւնք մը ունեցած չըլլալով, այժմ՝ կըստիպուինք հրապարակով երեւան հանել յիշեալ ընկերութեան ուղղութիւնը, և հրաւիրել պատանդաւորները որ կամ ձգեն հեռանան իրենց պաշտօնը հաշիւները տալէ յետոյ, կամ ձեռք ձեռքի տալով ընեն ինչ որ կը պահանջուի իրենցմէ:

Այն ընթերցարանը զոր հիմա դրած են հայ հասարակութեան տրամադրութեան տակ, բնաւ պատիւ չի բերիր ոչ միայն իրենց — միակ պատասխանատուները — այլ և առ հասարակ վառնայի հայութեան:

Ժամ է ուրիմ որ խորհին ու ըստ այնմ վարուին:

Խնդիրը հանրութեան բարեքին կը վերաբերի:

ԺՈՂՈՎՈՐԴԱՆ ԻՂԱԸ

Տեղական թերթի մը վերջին մէկ թիւին մէջ, հանրագրութիւն մը երեւաց, յաղմաթիւ ստորագրութիւններու վրայ յեցած, ստորագրութիւններ՝ որոնց մէջ աչքերնիս ի գուր փնտռեցին ծանօթ անուն մը:

Այս գրութեան իմաստը խնդրոյ առարկայ ընելէ առաջ, յայտնեմք թէ այն գրուած է այնքան անպաշտօն և գոհիկ ոճով մը որ ամբողջովին արժէքը չնշեւել կը սպառնար, և կը խլէր արդարացի պահանջի մը ամբողջ սրբութիւնը:

Կարելի չէ որ հրապարակի վրայ գրել չարժողները ճիգ մը թափէին աւելի խնամուած գաստիարակութեան մը ապացոյցները տալու: Այս ճիգը որքան ալ դժուարին, այլ սակայն անհրաժեշտ է. որովհետեւ հայ հայրենիքները չեն որ ունենան մը ջիւղ ու համեմը կրնան կազմել ընդհակառակը:

Այս տեսակետով, յիշեալ հանրագրութիւնը զուրկ միայն կրնար մնալ ամեն կարեւորութենէ, եթէ միւս կողմանէ, փիլիսոփայաբար չի մտածուէր թէ անտարակոյս, գաղթականի կարծի կեանքը, տառապանքները, յոշոտուած սիրելիներու ցաւը, հայրենեաց սուգը և աւերը, և վերջապէս յամեցող անդորրութեան մը անհամբեր տենդն է որ այդքան փրփուր դրած են խօսողներուն շուրթերուն վրայ:

Արդ, երբ իր տգեղ կեղեկներէն մերկացուի այդ գրութիւնը, երեւան կուգայ իղձ մը որ ամենուս ալ է: Անխախտիկ աղամանդ մը որ անտեսանելի մնացած է գրեթէ աղբանոցի կեղտութեան մէջ, տեղ մը որ իրենք չի կրնար ըլլալ անշուշտ:

Միութեան իղձն է այն:

Երկար ատեն է որ Հայութիւնը, աշխարհիս մէկ ծայրէն միւսը, իր բոլոր ձայնովը, «Միութիւն» կը պոռայ. միութիւն ցեղափոխական մարմիններու մէջ տեղ, իր կեանքի զոհողութիւնով անմահա-

ցած հերոսը այդ կը պոռայ, այդ կը պոռայ անմեղ նահատակը, որբը անպատասպար և կիսամերկ. դժբախտ այրին արտառուածոր աչքերով կը պոռայ՝ միացէ՛ք. Հայաստանը, որուն կուրծքին վրայ կը ճնշեն թշնամիները, թէեւ չնշապառ, այլ սակայն բաւական ուժ կը գտնայ պոռալու «զաւակներս, միացէ՛ք»:

Ժողովրդային այս ընդհանուր պահանջը անշուշտ նուիրական է և այնպիսի հանգամանք մը ունի զոր պէտք է ամենէն լուրջ նկատողութեան առնել:

Ժողովուրդը միութեան հրաւիրելով զանոնք՝ որոնք իրենց ձեռքը ամփոփած են իր ճակատագիրը, նախ յայտնած կըլլայ թէ տակաւին իր համարումը և յարգանքը չէ վերցուցած կուսակցութիւններու վրայէն:

Ժողովուրդը իր կրած անհուն վնասներուն փոխարէն չի տրամադար, չիւար, չանիծել, այլ միայն կը պահանջէ որ զինքը ազատութեան տանող ձեռքը ունենայ այնպիսի կորով մը, զոր շատ մը երակներու և ջիւղերու ամփոփումը միայն կրնայ պարգեւել, և որուն կարեւոր մատահիլ իր կեանքը, իր ապագան, իր հարստութիւնը և ամեն բան:

Ազգի մը ճակատագիրը միաժայն հաւանութեամբ միայն կրնայ որոշուիլ. ոչ մէկ կուսակցութիւն իրաւունք չունի իր ըմբռնած կերպովը անոր լուծում տալու յաւակնել. ահագին սխալներու կրնայ տեղի տալ այս, և ասոր ապացոյցներուն սպասելը պարզ յիմարութիւն է:

Տարիներ առաջ, գուցէ մէկէ աւելի կուսակցութիւններ, իրենց տարրեր գրութիւններով գոյուութեան իրաւունք ունենային. բայց հիմա երբէք չունին. ազգը՝ ոչ այնքան մարդ ունի, ոչ այնքան դրամ, ամենուր հասնելու համար, և ոչ ալ այնքան համբերութիւն, սին վէճերու, հակառակութիւններու, ազգակործան ընթացքներու ականատես ըլլալու համար:

Այս տիեզերական փափագին առջեւ երբ կուսակցութիւնները

խուլ կը մնան, կամ աշխարհի տկարները կը կարեն որքան մայրերը իրենց մանկանց մէկ քմահաճութիւն, հոն-րութեան մէկ մասը կը կարծէ թէ այս Միութիւնը ըստաճող անհատ-րին է. անկարելիութիւն մը որ առաջ կուգայ աւելի քանսային հեռապատկերի մը երկիւղէն: Ուրիշներ, ընդհակառակը, այնպիսի նկատումներ տեսնել կը կարծեն որոնք հիմնապէս անպատուիչ են կուսակցութիւններու, և անոնց որոնք այլ և այլ գործներու ներքե կը գործեն: Այս տեսակէն են նաեւ հանրագիրը ստորագրող բարկասիրտները, որոնց թիւը, գրեթէ քախտաբար, կարծուածին չափ ցանցաւ ըլլալու չէ:

Ժողովրդին ձայնը Աստուծոյ ձայնն է. պահ մը տեղի ուշադիր ըլլանք անոր պահանջման: Այդ պահանջումը միայն մէկ թերութիւն մը ունի. այսինքն լաւ բացատրուած չէ:

Միութիւնը ըսելով, ժողովուրդը չի փափագիր որ անպատճառ բռնոր հայ յեղափոխականները, ինչ որ ալ ըլլայ անոնց գրութիւնը, միանան. այսպիսի պահանջումը մը որքան անհեթեթ այնքան ալ վտանգաւոր կրնայ ըլլալ:

Ժողովուրդը Միութիւնը ըսելով, ըսել կուզէ թէ Յեղափոխութիւնը վարող մարմինը մէկ հատ պէտք է ըլլայ, զտուած մաքրուած իր ամէն անպատուիչ տարրերէն: Այնպիսի մարմին մը որ ազգին ամբողջութիւնը ներկայացնէ, ամէն կասկածէ բարձր մնայ և որուն առջեւ փշուրին, ինչպէս ամեն փառասիրական, ամեն դատապարտելի ձգտումներ:

Ինչ պէտք է ընել ասոր համար. Միջոց մը կայ, որ աշխարհի չափ հին է, և զոր մենք չգիտենալ կը ձեւացնենք: Աշխարհի մէջ, ամէն կուռ, ամեն անհամաձայնութիւն ինչով կը վերջանայ. Ոչ թէ միայն նոյն նպատակին ծառայող և նոյն ազգին պատկառող անհատներու մէջ, այլ նոյն իսկ ցմահ թշնամի ալլազգիներու մէջ պատերազմներ ու անհամաձայնութիւններ ժողովներով կը վերջանան: Ինչո՞ւ մենք չենք ուղիւ օգտուիլ այդ անվերապի միջոցէն:

Թող չառարկուի թէ ասկէց առաջ այդպիսի փորձեր վերադառնան: Հիմայ, պայմանները ուրիշ են. ամէն ոք հիմա զգացած է անշուշտ թէ կուսակցական անուրակելի յամառութիւն մը յառաջ քշելու ժամանակ չէ, և արդէն հնարաւորութիւնն ալ կը պակսի բարեբախտաբար:

Ուրեմն հարկ անհրաժեշտ է որ անյապաղ ընդհանուր ժողով մը գումարուի, յարմար քաղաքի մը մէջ: Այս ժողովին մէջ ամէն մէկ կուսակցութեան պատուիրակներէն զատ, չէղծ և պատուաւոր անձնաւորութիւններ ալ պէտք է գըտնուին փոխադարձ հաւանութեամբ:

Ընտրուած, և որոնց պաշտօնը պէտք է ըլլայ ամենուին առարկութիւնները լսել, անմաքուր և ատելի տարրերը իւրիւր աշխարհի մասնանի ընել, չէղծացնել անոնց թունալիր ժահըրը, վերջապէս իրենց բոլոր լոյսերէն և փորձառութենէն օգտուիլ այս միութիւնը ի գլուխ հանելու համար, այնպիսի հիմերու վրայ դնելով զայն որ աննկուն դառնայ, ազգին իրենց համապատասխանէ, նա մանաւանդ յաւէտ ազատ կացուցանէ զայն, անձի մը, ընտանիքի մը կամ խմբակի մը ձեռքը խաղալիք դառնալէ:

Ահա թէ ինչ կզգայ հայը. իր այս իրիւր ամէն ձեռով յայտնուեցաւ. քաղաքավար և հակառակ եղանակներով: Եթէ այսնպատակով յիշատակի մը կատարուի՝ անհնարին է որ տարրեր արդիւնք մը տայ: Հայ հասարակութիւնը պատրաստ է արդէն, եթէ դեռ պէտք կը զգացուի, բնականորէն ստորագրութիւններով ծածկուած հանրագրութիւններ զրկել կուսակցութեանց ձեռնհաս մարմիններուն:

Բայց բանի որ արդէն կուսակցութիւնները յօժարութիւն կը ցուցնեն այս մասին, և եթէ անկեղծ են այս ցոյցերը, կը մնայ տեսնել թէ նախաձեռնարկ ըլլալու փառքը որո՞ւ պիտի վրձակի: Սխալ է կարծիք թէ այս մտքով ելած դիմումները ստորագրուել են, ընդհակառակը, անոնք որ հեռու կը մնան, գուցէ ապացուցած կըլլան թէ ժողովքի մը դադափարը զիրենք կը սոսկացնէ: Որովհետեւ այս ժողովը, կամ լաւ է ըսել, այս ատենան այնպիսի մաղ մը պիտի ըլլայ, որ շատերը լծերես դուրս պիտի թափուին իր ցանցերէն:

Հայ ազգին սիրաւ կոտորած է այսօր. ախար է ան, ախար՝ ոչ միայն իր ըրած մեծ կորուստներուն համար, այլ մանաւանդ անոր համար որ գրեթէ քանոսային դրութեան մատնուած կը տեսնէ այն մարմինը որ կոչուած է զինքը փրկելու. իր ոսկեայ յոյսերուն թեւերը իրենց փետուրները կը սկսին կորսնցնել. և ցաւ մը այնքան սաստիկ կըլլայ որքան որ անկումը վերէն մեկնի: Յաւերու կծու տպաւորութեան տակ, նշանակելի է որ ժողովրդեան մէկ մասը տրամադիր կերեւայ բոլոր կուսակցութիւնները մէկ ջրով լուալու, առանց խորութիւն դրնելու անոնց տարբեր երանգներուն մէջ. նոյն իսկ եթէ անարգաբար ըլլայ: Բայց ոչինչ չի կայ դեռ յուսահատական. Ժողովուրդը, առ հասարակ կը յարգէ կուսակցութիւնները և այս յարգանքը Միութեան հրաւերով կը բացատրուի:

Կուսակցութեանց կը մնայ

խնդիրը ամենաշուրջ նկատողութեան տալու գործը, կանխելու համար այնպիսի ահեղ վտանգ մը որ կրնայ գերութեան շղթան առ յաւէտ կապուած պահել հայութեան վրին շուրջը:

Գամկը-Արշալիր

ՀԻՄՆԱՐԿԵՔ

Երկուշաբթի օրը, տեղւոյս և կեղեցիին յարակից գետինի վրայ տեղի ունեցաւ հիմնարկէքի հանգէսը վարժարանի շէնքին որ հոն պիտի բարձրանայ: Հիմնաքի գետեղման օրհնութիւնը կատարեց Տ. Գեորգ Թ. Վ. Նալպանտեան. ներկայ էին թաղական խորհուրդի անդամներն ու թաղեցիներու բազմութիւն մը որոնք եկած էին դիտել իրենց ապագայ կրթարանին շինութեան սկզբնաւորութիւնը:

Տարիուկէսէն աւելի է որ այրած է հին վարժարանը՝ իր բոցերուն ճարակ տանելով նաեւ լուսահոգի խեղճ Տէրունեան վարդապետի մարմինը: Այս եղբարական հրեհը պատճառ եղաւ որ վառնայի կըրթութեան գործը կաղ վիճակի մը մատնուի, թաղային աչի կարգ մը անհամաձայնութիւններուն հետեւանօք, որոնք միշտ ու ամառ տեղ երեւան կուգան, մեծ մասամբ անձնական կրքոտ հաշիւներու և բնէն և որոնց միակ տուժողը կըլլայ հէք անգիտակից պատանեկութիւնը:

Երկուշաբթիի համեստ արարողութիւնը կուգայ զգացնել թէ վերջապէս անյայտացած են այդ յանցապարտ անհամաձայնութիւնները:

Վառնայի կրթական տարեգրութեան մէջ նոր դարադուրս մըն է որ կը սկսի. անոր մեծ կարեւորութիւնն ըմբռնելու համար աչքի առնել պէտք է բերել վիճակն այն ժողովուրդին որ կրթարան չունի, և անոր որ կրթարան ունի: Երկուքին մէջտեղ անդունդ մը կայ. դժուար է մէկ կողմէն միւսը ցատքել. վառնայի հայը կատարեց այս ուսումը՝ ինքզինքը փրկելով:

Իրաւ է թէ վարժարանին նիւթական շէնքին գոյութիւնը մեծագոյն հաւաստիքը չէ նպատակին իսկական գործադրութեան. կարեւորը՝ մանաւանդ բարոյական շէնքն է որ հաստատուն հիմք պիտի թողու ուսումնասէր պատանեկութեան միտքին մէջ: Բայց անշուշտ այս ետքի շէնքին կառուցման եւս հոգ պիտի տարուի նոյնքան և աւելի աշխուրջութեամբ ու եռանդով. գործին նախաձեռնութեան պատիւը վայելող թաղական խորհուրդը կատարեալ վստահութիւն կը ներշնչէ այս մասին: Հոգաբարձութիւնը, իր կարգին, պիտի գայ վերջին զարկը

տալ կրթական այս գործունէութեան:

Թաղեցիքն զգացած ուրախութիւնը չենք յուսար որ յուսախաբութեան մը մատնուի: Նորեկ հայ զաղթականութիւնն ալ իր մասը ունի այս ուրախութեան մէջ, վտանգի կրթութեան սովէն ինք ալ կը տառապի:

ՀԱՅԵՐՆ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ա.

ՊՈՒՐԿԱԶ

Ուղիւսը օգտուիլ ու զեւրով իրաւունքի ընթերցողներուն կարճ ու ամփոփ տեղեկութիւններ հաղորդելու համար հայ հին և նոր զաղթականութեանց վրայ այն տեղերուն, ուր պիտի հանդիպեմ, կը սկսիմ Պուրկազէ, Պուրկազի ծովեզերեայ այս երկրորդ քաղաքէն: Ստալիսթիւնը վերապահալ է ու կը մնայ միշտ վարնայի, որուն հետ Պուրկազ կարող չէ մրցիլ ոչ մէկ տեսակէտով, ոչ բնական գիւրքով, ոչ ընդարձակութեամբ, ոչ չէնքերու գեղեցիկութեամբ, ոչ առեւտրական գործունէութեամբ և ոչ կլիմայի առեւտրութեամբ:

Պուրկազի հայութիւնը այժմ կը բաղկանայ շուրջ եօթնասուն ընտանիքներէ, որոց 30ը տեղացի և 40ը զաղթական են, տեղացիք ալ մեծ մասամբ Պուրկազի ազատութեան ի վեր կէլիպօղուէն, Սիլիւէէ և Ստրիանուպօլէն հետեւեալ եկած հաւաքուած են այստեղ: Հին ու նոր զաղթական ընտանիքներէն զատ կան մօտ 1200 պանտուխտ հայեր, որոնք գործաւոր դասակարգին կը վերաբերին ընդհանրապէս և որոնք ուրախալիքէ տեսնել թէ աննշան բացառութեամբ յաղորած են ըզբաղում գտնել իրենց ապրուստը ճարելու համար:

Պուրկազի ազգայինները ունին երկուստ վարժարան մը, երկուստ բառը պէտք չէ այստեղ հասկնալ իր սովորական նշանակութեամբ. ըսել կուգիմ, մանչ և աղջիկ տարբեր յարկերու ներքեւ չեն կըրթուիր, այլ միեւնոյն շէնքին մէջ հաւաքուած, որ վարժուած տուն մըն է, մէկտեղ գաւ կառնեն ու կաշխատին: Այս դրութիւնը որ գուցէ ընթերցողներուն մէկ մասին լուրջ մտածումներ պիտի պատճառէ, այստեղ գոհացուցիչ արդիւնք ունեցած է. յայտնի կը տեսնուի որ այս մասին ամէն բան կախում ունի դպրոցական կրթութեան եղանակէն և հսկողութեան աշարջութենէն:

Վարժարանը ունի 35 աշակերտ և 25 աշակերտուհի, որոնք կը կազմեն Բ. Գ. և Դ. կարգերը,

